


Ի՞նչ է պետք իմանալ ցանցին միացված արևային ֆոտովոլտային համակարգի մասին

Այս ուղեցույցի նպատակն է մեր հաճախորդներին տրամադրել որոշակի ընդհանուր տեղեկատվություն ցանցին միացված արևային ֆոտովոլտային (PV) համակարգերի վերաբերյալ, որպեսզի նրանք կարողանան կատարել տեղեկացված ընտրություն և պատկերացում ունենան համակարգի աշխատանքի մասին:

Ցանցին միացված արևային PV համակարգը արևային վահանակների համախումբ է, որը միացված է ցանցին փոխակերպիչի միջոցով՝ Ձեր բնակարանը էլեկտրաէներգիայով ապահովելու համար, ինչը ընձեռում է հնարավորություն արտադրած ավելցուկային էլեկտրաէներգիան մղել դեպի ցանց:



Գիշերը, երբ արևային վահանակները էլեկտրաէներգիա չեն արտադրում, էլեկտրականությունը վերցնում եք ցանցից: Եթե օրվա ընթացքում բավականաչափ էներգիա եք արտահանում, ապա դա կհավասարակշռի կամ կգերազանցի էլեկտրաէներգիայի այն քանակը, որը Դուք ստանում եք ցանցից գիշերը:

Ցանցի հաշվարկման /Net-Metering/ առանձնահատկությունները Հայաստանում

Քանի որ Հայաստանում էլեկտրաէներգիայի ցերեկային սակագինը 44,98 դրամ է, իսկ գիշերային սակագինը՝ 34,98 դրամ, ապա ցերեկը արտադրված և ցանց մղված արևային էներգիան կարող է փոխհատուցել էներգիայի ցերեկային ծախսերը, այդուհանդերձ, այն արժե ավելի, քան էներգիան՝ ըստ գիշերային սակագնի: ՀՀ կառավարությունը ընդունել է այնպիսի հաշվարկման համակարգ, որի համաձայն արևային էներգիան 1:1 փոխհատուցում է ցերեկային սպառման ծախսերը, բայց հաճախորդը շարունակում է վճարել գիշերային սպառման համար՝ գիշերային սակագնով: Տարվա վերջին կուտակված և չօգտագործված արևային էներգիայից առաջին հերթին հաճախորդին է վերադարձվում գիշերային սպառման

համար վճարված ամբողջ գումարը, որից հետո հաճախորդը մնացած ավելցուկից ստանում է 50% (կես գնով) կանխիկ:

Արևային վահանակների մասին

Արևային վահանակները հիմնականում հարթ վահանակներ են՝ տեղադրված տանիքների կամ այլ կառույցների վրա: Արևային վահանակները արևի լույսից ստացված էներգիան վերածում են հաստատուն հոսանքի (DC):

Տեղադրելով PV-վահանակներ՝ Դուք ստանում եք էներգիայի ամենաունիվերսալ տարբերակը՝ էլեկտրաէներգիա: Արևային վահանակներից արտադրված էլեկտրաէներգիան Դուք կարող եք օգտագործել ըստ Ձեր կարիքների: Այն կարող է վերածվել լույսի, ջերմության և այլն: Բայց, եթե Ձեր միակ խնդիրը, օրինակ՝ ջուր տաքացնելն է, ավելի լավ է տեղադրեք արևային ջրատաքացման համակարգ, այլ ոչ թե՛ ֆոտովոլտային վահանակ: Արևային ջրատաքացուցիչները օգտագործում են արևի և / կամ շրջակա օդի տաքությունը՝ ջուրը տաքացնելու համար. դրանք էլեկտրաէներգիա չեն արտադրում:

Արևային վահանակները ավելի շատ էներգիա են արտադրում արևի ուժեղ ճառագայթման վայրերում՝ երկար, արևոտ օրերին: Ավելի քիչ էներգիա է գեներացվում ամպամած կամ անձրևոտ եղանակին, և երբ վահանակների վրա ստվեր է ընկնում ծառերի կամ այլ խանգարող տարրերի կողմից, նաև՝ երբ վահանակները տաքանում են:

Ի՞նչ երաշխիքներ եք Դուք ստանում

Վահանակի երաշխիքները

- 12 տարի (գործարանային երաշխիք, ըստ որի ընկերությունը երաշխավորում է 12 տարվա ընթացքում վահանակների վրա դեֆեկտների առաջացման բացակայությունը)
- 25 տարի (վահանակի արտադրողականության համար տրվող երաշխիք, ըստ որի 25 տարի հետո վահանակների էլքային պիկային հզորությունը կկազմի ոչ պակաս 80%)

Փոխակերպիչներին տրվող երաշխիքները

Փոխակերպիչը սովորաբար ունի 5 տարվա ստանդարտ երաշխիք և կարելի է այն երկարաձգել մինչև 10-25 տարի՝ լրացուցիչ վճարի դիմաց:

Արդյո՞ք ձեր տանիքը վերանորոգման կարիք ունի

Նախքան արևային վահանակներ տեղադրելու մասին մտածելը, ինքներդ Ձեզ հարց տվեք՝ *թե քանի՞ տարեկան է իմ տանիքը*: Եթե գիտեք, որ շուտով Ձեզ հարկավոր է լինելու նոր տանիք, կամ որ Ձեր տանիքի մի մասը վնասված է, այս պարագայում արևային վահանակներ տեղադրելը ամենալավ գաղափարը չէ: Հնարավորության դեպքում, նախքան տեղադրումը՝ հոգացեք տանիքի վերանորոգումը: Այսպիսով, Դուք հավելյալ չեք վճարի վահանակներն ապամոնտաժելու և նորից տեղադրելու համար:

Կարո՞ղ եմ արդյոք օգտագործել արևային վահանակների արտադրած էներգիան հանրային ցանցում էլեկտրականության բացակայության ժամանակ

Անվտանգության նկատառումներից ելնելով, երբ ցանցը անջատվում է, Ձեր արևային PV համակարգը ինքնաբերաբար և անմիջապես անջատվում է: Դուք կարող եք ունենալ համակարգ, որը կապահովի Ձեզ վթարային էլեկտրականությամբ՝ ցանցի խափանման ժամանակ (հիբրիդային PV համակարգ): Սա պահանջում է համապատասխան ինվերտորի,

մարտկոցների լրացուցիչ տեղադրում և հնարավոր փոփոխություններ տան էլեկտրագծերում:

Դժվար է արդյոք խնամել արևային վահանակները

Արևային վահանակների խնամքի ամենատարածված խնդիրը վահանակի ապակե մասի մաքրումն է՝ ավելորդ կեղտը հեռացնելու համար: Շատ դեպքերում մաքրման կարիք է առաջանում միայն երկարատև չոր եղանակներին, երբ անձրևներ չկան՝ բնական մաքրում ապահովելու համար: Վահանակներից փոշու և կեղտի շերտը հեռացնելու համար՝ պարզապես ջրով լվացեք այն: Եթե վահանակի վրա կա հաստ շերտով կեղտ կամ մուր, որը դժվար է հեռացնել, ապա լվացեք տաք ջրով և սպունգով: Սոդուլների լվանալը նման է ապակե պատուհանների լվացմանը, բայց լվացող միջոցներ չպետք է օգտագործվեն: **Մի՛ մաքրեք վահանակները քիմիական կամ հղկող նյութերով:**

Արևային վահանակները ստուգելիս պետք է ուշադրություն դարձնել նաև վահանակի կրող կոնստրուկցիայի արտաքին վիճակին: Ստուգվող վահանակները պետք է ունենան ամրացման պտուտակներ, և պետք է շրջանակն ու ամրակցման համակարգը ապահով կերպով ամրացված լինեն միմյանց:

Պե՞տք է արդյոք հեռացնել ձյունը արևային վահանակներից

Մենք խորհուրդ չենք տալիս բարձրանալ տանիք՝ Ձեր վահանակների վրա եղած ձյունը մաքրելու համար: Ամեն դեպքում, վահանակները մուգ գույն ունեն և բավականաչափ տաքանում են արևի ճառագայթներից, որպեսզի ի վերջո ձյունը հալվի և սահի ապակու մակերևույթից: Վահանակների մաքրման ժամանակ կարող եք վնասել կրող կոնստրուկցիան կամ քերծել վահանակների մակերեսը կամ նույնիսկ կոտրել առջևի ապակիները: Եվ այսպիսով, վահանակի 25 տարվա երաշխիքը չի ծածկում տան սեփականատիրոջ պատճառած վնասը: Մենք նաև պատասխանատվություն չենք կրում Ձեր՝ տանիքից ընկնելու համար:

Ի՞նչ կասեք բնության այլ անակնկալների մասին

Արևային ֆոտովոլտային համակարգերը երբեմն տեղադրված են այնպիսի վայրերում, որտեղ հաճախակի են ամպրոպները, փոթորիկները, կարկուտը և այլն: Հավանականություն կա, որ այս երևույթների ընթացքում որոշ արևային էլեկտրակայաններ կարող են վնասվել: Եթե Դուք ապրում եք այնպիսի վայրում, որտեղ նման եղանակը սովորական է, ապա գուցե իմաստ ունի մտածել լրացուցիչ ապահովագրության մասին:

Կարո՞ղ եմ արդյոք փոփոխություններ կատարել իմ տան էլեկտրագծերում

Էլեկտրագծերի նորոգման հետ կապված ցանկացած աշխատանք պետք է իրականացվի պրոֆեսիոնալ էլեկտրիկների կողմից և հաստատվի Solaron-ի ինժեներների կողմից: Այս պայմանի խախտման դեպքում՝ ընկերությունը պատասխանատվություն չի կրում արևային էլեկտրակայանի փոխակերպիչի և այլ բաղադրիչների վնասի համար: